



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



International Foundation
for Electoral Systems



ՅԵՆԵՄ
ՆԱԲԱԹՎՅԱԼՈՒՆ
ՆԱԳՐԱՅԵՄ
ՎԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ



ՆԱԲԱԹՎՅՄ ՆԻՍԹԱԾԵԾՈՆ
ԾԱՆՅՈՒՄԲԵՐՈՆ, ԲԵԿԵՐԲԵՐՈՒՄ ԵՎ
ՆԵՆՎՈՅԵՐՈՆ ԵՎ ՆԵՄԵՐՈՒ

Հանձնաժողովի՝ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը տանող անդամի գործառույթները

- ▶ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկության ընթացակարգը սկսվում է քվեարկության օրվա ժամը 9-ից և ավարտվում է ժամը 19-ին:
- ▶ Քվեարկության օրվա ժամը 9-ից հանձնաժողովի նախագահը Ձեզ պետք է փոխանցի.
 - ✓ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակը,
 - ✓ ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված անհրաժեշտ քանակությամբ համապատասխան տեսակի քվեաթերթիկներ,
 - ✓ հատուկ ծրարներ (շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում առկա ընտրողների համապատասխան),
 - ✓ կնքված շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը, որում պետք է գետեղված լինի ստուգողական թերթը,
 - ✓ շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ճեղքի համար հատկացված կնիքը (տեղափոխվող քվեատուփը կնքվում է շրջիկ (տեղափոխվող) քվեատուփով ընտրությունն ավարտվելուց հետո):
 - ✓ Ընտրողի անհատական օգտագործման համար հատկացված գրիչներ (տեղափոխվող քվեատուփի ցուցակում առկա ընտրողներին համապատասխան):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփը ուղեկցող տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները շրջիկ (տեղափոխվող) քվեատուփով քվեարկության գործընթացում պետք է ապահովված լինեն դիմակով, դիմավահանով, ձեռնոցներով և ձեռքի ախտահանիչ լուծույթով:

- ▶ Ընտրողին մոտենալիս խնդրե՛ք կրան ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը:
- ▶ Համեմատե՛ք ընտրողի անձնական համարը շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում ընդգրկված անձնական համարի հետ:
- ▶ Ստուգե՛ք ներկայացված անձը հաստատող փաստաթղթում նշված ընտրողի գրանցման տվյալների և շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում առկա տվյալների համապատասխանությունը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե ընտրողների համապատասխան ցուցակում Վրաստանի քաղաքացու անձնական համարի, սեռի և լուսանկարի հետ մեկտեղ, ամբողջությամբ համապատասխանում են ցուցակում առկա տվյալներից (անուն, ազգանուն, ծննդյան ամիս, ամսաթիվ, տարեթիվ, հասցե) գոնե երեքը, ընտրողը մասնակցում է քվեարկությանը:

- ▶ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում ստորագրությամբ վավերացրեք քվեաթերթիկ/քվեաթերթիկներ տրամադրելը:
- ▶ Խնդրեք ընտրողին շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակում իր ազգանվան երկայնքով ստորագրությամբ հավաստել քվեաթերթիկը/քվեաթերթիկները ստանալը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան դիմաց գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողին, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ցուցում տաք ստորագրելու նույն սյունակում: Միևնույն ժամանակ, Նշվածի վերաբերյալ պետք է բացատրագիր գրեք (ընտրողի անվան և ազգանվան և ցուցակում նրա հերթական համարի մատնանշմամբ):

- ▶ Ընտրողին փոխանցեք, ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված, ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- ▶ Ընտրողի կողմից քվեաթերթիկը/քվեաթերթիկները լրացնելուց հետո, նրան մատնաչեք, որ վերցնի հատուկ ծրարը և նրա մեջ գետեղի ծալված քվեաթերթիկները:
- ▶ Ընտրողին խնդրեք ծրարը գցել շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփի մեջ:
- ▶ Զվեարկության ավարտից հետո շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ճեղքն այնպես կնքեք, որ անհնար լինի, առանց կնիքը վնասելու, այն բացել:
- ▶ Ոչ ուշ, քան մինչև քվեարկության օրվա ժամը 20-ը շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուփը վերադարձրեք ընտրական տեղամաս:
- ▶ Զվեարկության շենք վերադառնալուց հետո, հանձնաժողովի քարտուղարին փոխանցեք չօգտագործված/վնասված քվեաթերթիկները, հատուկ ծրարները և հանձնաժողովի անդամների բացատրագրերը (այսպիսինի գոյության դեպքում):

Նկատի՝ ունեցեք.

- ✓ Շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկությանը մասնակցող ընտրողների հանդեպ չի կիրառվում նշմարում:
- ✓ «Ֆիզիկական վիճակի» պատճառով ընտրողի կողմից շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի միջոցով քվեարկության դեպքում, շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում արեք գրառում՝ «Ֆիզիկական վիճակ» և նշվածը հավաստեք ստորագրությամբ:
- ✓ «Ֆիզիկական վիճակ» ունեցող ընտրողի (ևս և այն ընտրողի, որն ինքնուրույն չի կարող լրացնել քվեաթերթիկը) փոխարեն, նրա ներկայությամբ, քվեաթերթիկը լրացնում, հատուկ ծրարի մեջ է գետեղում և ծրարը շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի մեջ գցում նրա կողմից ընտրված անձը (բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցչի և դիտորդի):
- ✓ Եթե խախտվել է շրջիկ (տեղափոխվող) քվեատուփի կնիքի ամբողջականությունը, այդ մասին անհապաղորեն տեղեկացրեք հանձնաժողովի նախագահին, կազմեք բացատրագիր՝ պատճառի նշմամբ և ստորագրել տվեք ուղեկցող անձանց: